հայ բնակարանք՝ մեկուսացման զգաստութեան և անաչէր իմաստութեան մեծ դեղեր են այսպիսեաց համար։ Ասո՛նց համար ալ դարձեալ՝ օրինակելի ուղղիչներ կըրնան ըլլալ Հրեայք ու գաւառացի Հայք։ Կ. Պոլիսի մէջ հեռագնետէ պարպուելու վրայ են բնական վայելչութեամբ, օդով, ջուրով, չուրջ պարտէզով և ծառաստանով, դրախտացեալ և աժա՛ն վայրերը, և գլուխն առնողը՝ Բերա կը վազէ. Բե՛րա՝ այս է Պոլսեցի ցուցաչէրին Օմեղան, և անկէ անդին՝ Բերացիք թո՛ղ պատմեն՝ (եթէ գանել կարենան իրենց արուեստական այդ դրախտին մէջ) նոր փրցուած յոյսի կոյս և կանաչ տերև մը ի ձեռին։

Անցնի՛նք անցնի՛նք Բերայէն՝ բաղդախաղի սեղանները։ Տէ՛ր իմ, ի՛նչ դիչերներ լուացուած, ի՛նչ գրպաններ պարպուած, ի՛նչ գայթագղութիւններ խափուցուած։ Եւ հետեւեալ առաւօտուն՝ մինչ արեւը վից ժամուան ասպարէզ առած է և Հաճի աղան եօթը ժամ է գործի սկսած՝ իր հակա՛յ դրամագլուխին մանրամասնութեանց գլուխը՝ մեր ժառանգորդը կամ միւսի Օննիկը դեռ նոր աչուընները չփչփելով՝ առջի դիչերուան անուրջները կը տրորէ՛ ու կը տրորէ՛, ժամու մը արդուզարդէ ետք հազիւ 7 կէսին ինքզինքը ճաչարա՛ն նետելու անկէ 8 1/2ի՛ն իր գործին, մեղա՛յ իր ժառանգա՛ծ գործին վրայ երերուն և երազուն ատուեր մը ձգելու, և արձակելու քանի մը չզագրգիռ հրամաններ իր յապուշ կրթեալ կամ երես ելած ստորադրեալներուն, և-րեկոյին դարձեալ նոյն ողբերգական կատակերգութիւնները չարունակելու համար, մինչև որ լըսենայ ամէն բան, մինչև առած դրամօժիան անգամ՝ եթէ դժբաղդաբար ճանչցած ալ է Հիմէնը. և դարձեալ դժբաղդաբար՝ այսպիսիները բացառութիւն համարուելու չափ քիչ ալ չեն՝ մանաւանդ Կ. Պոլիս, Զմիւռնա և Ադրիանդ-